2021, № 3, 71-85 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.3.071

ՍԻՄՓԼԻՖԻԿԱՑԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՅՈՒԼԻԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ՇՈՂԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Հոդվածում քննարկվում է քաղաքական հաղորդակցություններում սիմփլիֆիկացիայի կիրառումը: Ժողովրդավար առաջնորդները հաճախ պարզեցնում են քաղաքական տեքստերը լսարանի վրա ազդեցությունն արագացնելու և ուժգնացնելու համար, ինչպես նաև մարդկանց և իշխանության միջև սոցիալական հեռավորությունը կրճատելու նպատակով: Ն. Փաշինյանի ֆեյսբուքյան էջի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ նա ոչ միայն օգտագործում է սիմփլիֆիկացիոն հնարքներ, այլև ստեղծում է նորերը: Քաղաքական հաղորդակցություններում սիմփլիֆիկացիաների չարաշահումը կարող է դառնալ առօրյա լեզվից դեպի կրթական, գիտական, աշխատանքային և քաղաքական դիսկուրսներ սիմփլիֆիկացիների ներխուժմանը պատճառ՝ զրկելով դրանք ռացիոնալ փաստարկումից:

Բանալի բառեր – *սիմփլիֆիկացիա, մանիպուլյատիվ տեխնիկա, քաղաքական հաղորդակցություններ, քաղաքական դիսկուրս, քաղաքական տեքստ, հակաէլիտիզմ, պոպուլիզմ, ժողովրդավարություն*

Քաղաքական հաղորդակցությունների էությունը

Գ. Ալմոնդը քաղաքական համակարգը ներկայացնում է որպես քաղաքական դիրքորոշումների և որոշակի քաղաքական իրավիճակներին արձագանքելու միջոցների ամբողջություն: Նա ուշադրություն է դարձնում համոզմունքներ, կարգախոսներ, նշաններ ստեղծելու և զարգացնելու կարողության, ինչպես նաև անհրաժեշտ լեգիտիմություն ձեռք բերելու և պահպանելու նպատակով այս ամենը հմտորեն կիրառելու վրա[1]:

Քաղաքական հաղորդակցության օգնությամբ ձևավորվում է պետության և նրա քաղաքականության, կուսակցությունների և նրանց առաջնորդների մասին հասարակական կարծիքը: Քաղաքականությունը ժամանակակից հասարակության ամենակարևոր ինստիտուտներից է, որի նպատակն է հասարակական գործընթացներում կայունության պահպանումն ու մարդկանց փոխհարաբերությունների կարգավորումը[2]: Քաղաքական հաղորդագրությունները կարող են ստեղծվել, ուղարկ-

[1] Տե՛ս **Столярова Е.В.** Политическая коммуникация как обмен информацией между субъектами политической жизни // «Лингвориторическая парадигма: теоретические и прикладные аспекты», № 11, СГУ, 2008, էջ 89-93:

[2] Տե՛ս **Тибинько Н. Д.** Манипуляция в политическом дискурсе // «Вестник Челябинского государственного университета», № 3, 2011, էջ 134-137:

վել և ստացվել ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ լրագրողների, տարբեր շահագրգիռ խմբերի և առանձին անհատների կողմից[3]:

Քաղաքական խմբերն ու առաջնորդները հետապնդում են երեք հիմնական նպատակներ՝ **իշխանության ձեռքբերում, իշխանության իրացում և իշխանության պահպանում**: Քաղաքական գործչի նպատակն է ժողովրդի համակրանքը, վստահությունը, համաձայնությունը գրավելը և պահպանելը: Այդ ամենին միշտ չէ, որ հնարավոր է հասնել ռացիոնալ համոզման միջոցով, որը հիմնված կլինի տրամաբանական փաստարկների վրա: Քաղաքական գործչի խոսքը բաղկացած է նշաններից, իսկ նրա հաջողությունը կախված է նրանից, թե որքանով են այդ նշանները ընկալելի լսարանի կողմից: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար գոյություն ունեն մեթոդներ և միջոցներ, այդ թվում նաև՝ մանիպուլյատիվ[4]:

Քաղաքական դիսկուրս

Քաղաքական հաղորդակցությունն ունի սեփական յուրահատուկ լեզուն, այսպես կոչված՝ **«իշխանության լեզուն» կամ քաղաքական դիսկուրսը:** Ինչպես նշում է Գ. Լասուելը. «Քաղաքականության լեզուն իշխանության լեզուն է: Այն որոշումների լեզու է: Այն ամրագրում է որոշումները և դրանց մեջ փոփոխություններ մտցնում: Այն մարտական կոչ է, վճիռ և դատավճիռ է, օրենք է և նորմ, պաշտոնական երդում է, վիճելի հարցերի քննարկում, մեկնաբանություն և բանավեճ»[5]:

Շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրի տեսության համաձայն՝ իմաստը ներհատուկ չէ իրերին, ոչ էլ ծնվում է մարդու գիտակցությունից կամ զգացմունքներից, այլ նշանակման պրակտիկաների արդյունք է: Այն ոչ թե իրերի կամ մարդու, այլ լեզվի հատկություն է, ուստի արտաքին աշխարհը և առանձին մարդու գիտակցությունը կարող են հասկացվել միայն որպես լեզվի արդյունք, այլ ոչ թե լեզվի աղբյուր[6]:

1970-ականներին Յ. Հաբերմասը առաջարկեց «դիսկուրս» հասկացությունը մեկնաբանել սոցիոլոգիական ապարատի միջոցով՝ որպես խոսքային հաղորդակցության տեսակ՝ հաշվի առնելով հասարակական նորմերը և արժեքները[7]:

Վան Դեյկը դիսկուրսը սահմանելիս առաջարկում է երկու մոտեցում: Լայն իմաստով դիսկուրսը նա մեկնաբանում է որպես բարդ հաղորդակցային իրադարձություն, որը տեղի է ունենում խոսողի և լսող-

---

[3] Տե՛ս **Грачев М. Н.** К вопросу об определении понятий «Политическая коммуникация» и «Политическая информация» // «Вестник Российского университета дружбы народов.» Серия: Политология, № 4, 2003, էջ 34-42:

[4] Տե՛ս **Цуладзе А. М.** Политические манипуляции или Покорение толпы. М., 1999, էջ 13:

[5] **Лассуэлл Г.** Язык власти // «Политическая лингвистика». Вып. 20, Екатеринбург, 2006, с. 264–279.

[6] Տե՛ս **Jørgensen M., Phillips L.** Discourse Analysis as Theory and Method, SAGE Publications, London, 2002, էջ 1:

[7] Տե՛ս **Зорина Н. М., Киреенкова З. А., Краснова О. Н.** К вопросу об особенностях политического дискурса в современной России, «Сервис plus», vol. 11, № 1, 2017, էջ 37-43:

ների (դիտորդների) միջև որոշակի ժամանակային, տարածական, սոցիալ-մշակութային և այլ համատեքստերում և կարող է ունենալ վերբալ և ոչ վերբալ բաղկացուցիչներ: Նեղ իմաստով դիսկուրսը բանավոր կամ գրավոր տեքստն է, որն ունի միայն վերբալ բաղադրիչ: Դիսկուրսում որոշակի ձևով շեշտադրվում են նաև լեզուն կրողների անձնային բնութագրիչները, նրանց զգացմունքները, նպատակները և այլն[8]: Դիսկուրսը բարդ հաղորդակցային երևույթ է, որը ներառում է նաև սոցիալական համատեքստը, ինչը տալիս է պատկերացում ինչպես հաղորդակցվողների մասին, այնպես էլ հաղորդագրության ստեղծման գործընթացի և դրա ընկալման մասին[9]:

Քաղաքական տեքստ և քաղաքական լեզու

Քաղաքական տեքստի նպատակն է լսարանի վրա նպատակային ազդեցությունը: Նեղ առումով քաղաքական տեքստերի ուսումնասիրությունը ենթադրում է միայն քաղաքական գործիչների կողմից ստեղծված տեքստերի վերլուծություն: Իսկ լայն առումով քաղաքական են բոլոր այն տեքստերը, որոնք քաղաքական թեմայով են: Քաղաքական տեքստն ունի մի շարք կարևոր գործառույթներ՝ տեղեկատվության տարածում, լսարանի ուշադրության գրավում, համոզում և գործողության խթանում[10]:

Լասուելը նշում է, որ **ժողովրդավարական երկրներում քաղաքական գործիչների դիսկուրսը շատ մոտ է իրենց ընտրողների դիսկուրսին, իսկ ոչ ժողովրդավար էլիտաները ձգտում են հեռավորություն պահպանել և գերակայություն ցուցաբերել հասարակության շարքային անդամների հանդեպ, ինչն անշուշտ արտացոլվում է իշխանության քաղաքական լեզվի ոճաբանական առանձնահատկություններում**[11]: Լեզվական նորամուծությունները նախորդում են հասարակական ձևափոխումներին, և հետևաբար քաղաքական լեզվում ոճային փոփոխությունները հարկ է որակել որպես հասարակության մոտալուտ ժողովրդավարականացման կամ ժողովրդավարության ճգնաժամի ցուցիչներ[12]:

Քաղաքականության մեջ լեզվի դերի ուսումնասիրությանը լրացուցիչ ազդակ են հաղորդել Ջորջ Օրուելի աշխատությունները: 1948 թվականին հրատարակվում է «1984» հակաուտոպիական վեպը, որտեղ նա ներկայացնում է տոտալիտար հասարակություններում մանիպուլյատիվ տեխնիկաների կիրառումը: Օրուելը իր գրքում նկարագրում է երկիմաստությունների սկզբունքը (doublethink) և նորալեզվի

---

[8] Տե՛ս **Дейк Т. А. ван**, Дискурс и власть. Репрезентация доминирования в языке и коммуникации, М., 2013, էջ 21:

[9] Տե՛ս **Дейк Т. А. ван**, Язык, познание, коммуникация: Пер. с англ. М., 1989, էջ 113:

[10] Տե՛ս **Алтунян А. Г.** Анализ политических текстов: Учебное пособие. М., Логос, 2006, էջ 384:

[11] Տե՛ս **Лассуэлл Г.** Язык власти // Гуманитарный портал, https://gtmarket.ru/library/articles/880, 2021-09-06, ժ 12:45:

[12] Տե՛ս նույն տեղը:

(newspeak) բառարանը: Նա կոնկրետ օրինակներով ներկայացնում է բառային մանիպուլյացիաներ, որոնք կիրառվում են պետության ներսում իշխանության պահպանման և ամրապնդման համար՝ պետության գաղափարախոսության հիմքում դնելով երկիմաստ, իրար հակասող կարգախոսներ՝ «Պատերազմը խաղաղություն է», «Ազատությունը ստրկություն է», «Տգիտությունն ուժ է»[13]: Օրուելը համոզված էր, որ միտքը կախված է լեզվից, և քաղաքական ղեկավարության կողմից լեզվական արտահայտչամիջոցների շրջանակների սահմանափակման պարագայում սահմանափակվում են նաև մտավոր գործունեության հնարավորությունները[14]: Քաղաքական ղեկավարության նպատակն է նորալեզվի միջոցով չեզոքացնել անթույլատրելի մտքերը. անցանկալի մտքերն ուղղակի հնարավոր չէ արտահայտել, եթե չկա դրանց արտահայտման համար անհրաժեշտ բառապաշար[15]:

Քաղաքական մանիպուլյացիա

Իշխող դասակարգը արդարացնում և պահպանում է իր իշխանությունը՝ ապահովելով կառավարվողների ակտիվ համաձայնություն[16]: Այս պատճառով քաղաքական դիսկուրսում կարևոր դեր են ստանձնում համոզման հաղորդակցային տեխնոլոգիաները: Համոզման մանիպուլյատիվ տեխնոլոգիաները քաղաքական հաղորդակցություններում առավել հաճախ կիրառվողներից են:

Գերմանացի սոցիոլոգ Հ. Ֆրանկեն մանիպուլյացիա հասկացությունը սահմանում էր որպես թաքնված ազդեցություն՝ ի վնաս այն անձանց, որոնց ուղղված է[17]: Այս սահմանումով Ֆրանկեն, ըստ էության, մանիպուլյացիան մեկնաբանում է որպես բացասական երևույթ: Ըստ Գ. Շիլլերի՝ հաջողության հասնելու համար մանիպուլյացիան պետք է մնա աննկատ. մանիպուլյացիայի հաջողությունը երաշխավորված է, երբ մանիպուլյացիայի օբյեկտը հավատում է, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում, բնական է և անխուսափելի, իսկ մանիպուլյացիայի փաստն ինքնին չի արտացոլվում իր հիշողության մեջ[18]:

Կարա-Մուրզան առանձնացնում է մանիպուլյացիայի 3 հիմնական բնութագրիչներ՝ աննկատություն, մարդու հոգեկանի թիրախավորում և մանիպուլյատիվ գործիքակազմի ու տեխնիկաների կիրառման վարպետություն[19]:

---

[13] Տե՛ս **Ջ. Օրուել**, 1984, Անտարես, Եր., 2012:

[14] Տե՛ս **Geis M. L.** The Language of politics. – N.Y.: Springer Verl., 1987, էջ 2:

[15] Տե՛ս **Jones J., Wareing Sh.** Language and politics // «Language, society and power.» – L.; N.Y., 1999, էջ 36:

[16] Տե՛ս **Кара-Мурза С. Г.** Манипуляция сознанием. М., 2005, էջ 63-64:

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 16:

[18] Տե՛ս **Володенков С. В.** Технологии манипулирования общественным сознанием в интернет-пространстве как инструмент политического управления // Политическая экспертиза: политэкс, том: 13, № 3, Санкт-Петербург, 2017, էջ 57-69:

[19] Տե՛ս **Кара-Мурза С. Г.,** նշվ. աշխ., էջ 16-18:

Մանիպուլյատիվ տեխնիկաներ

Արդյունավետ համոզելու համար ժողովրդավար քաղաքական գործիչը պետք է կարողանա հմտորեն կիրառել մանիպուլյատիվ տեխնիկաները՝ հաշվի առնելով հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր զարգացումները, մարդկանց կյանքի առանձնահատկությունները, հաղորդակցման միջոցների առկայությունն ու տարածվածությունը, տնտեսական վիճակը, աշխարհաքաղաքական իրավիճակը և այլն:

Գոյություն ունեն մանիպուլյատիվ տեխնիկաների տարբեր դասակարգումներ: Ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների՝ առանձնացնում են **ֆոնետիկ** (ձայնի առոգանություն, խոսքի տեմպ ու դինամիկա, ճիշտ պահին արված դադարներ և այլն)[20], **իմաստաբանական** (բառը փոխարինվում է իմաստով մոտ, բայց այլ կոնոտատիվ նշանակություն ունեցող հոմանիշով), **քերականական** (կրավորական կառույցների կիրառում)[21], **լեքսիկ** (խոսքի անդեմ կառույցների, ընդհանրացումների կիրառում)[22]: Լեքսիկ մակարդակում ակտիվորեն կիրառվող **ոճաբանական տեխնիկաներից** կարելի է առանձնացնել նաև **էվֆեմիզմները, դիսֆեմիզմները, հռետորական հարցերը**, **փոխաբերությունները**, **համեմատությունները**[23]:

Լսարանի վրա ազդեցություն են թողնում նաև արտահայտությունը **երկխոսությանը** մոտեցնող և **«մտերմացնող»** տեխնիկաները, որոնք նպաստում են հասցեատիրոջ հետ շփում հաստատելուն, կրճատում են սոցիալական հեռավորությունը: Հաղորդագրության հասցեատիրոջը **անձնական դերանուններով** դիմելը, պոտենցիալ հասցեատիրոջը **ուղղակի մատնացույց անելը** կամ **հարցադրումները** նույնպես հաճախ կիրառվող մանիպուլյատիվ տեխնիկաներ են: Ոճաբանական մակարդակում քաղաքականության մեջ հաճախ են կիրառվում **հակաթեզի և կոնտրաստի տեխնիկաները**[24]՝ *«նախկիններ-ներկաներ», «սև-սպիտակ», «էլիտա-ժողովուրդ»*[25]:

Ամերիկացի հետազոտող Ջ. Բրաունը նկարագրել է մի շարք հնարքներ, որոնք կիրառվում են հատկապես քաղաքական մանիպուլյացիաներում[26]: Դրանցից են՝ **կարծրատիպացում**, **անունների աղավաղում** կամ **պիտակավորում**, **փաստերի ընտրողաբար մատուցում կամ**

---

[20] Տե՛ս **Ковешникова М. Н.** Речевая манипуляция и приемы речевого манипулирования // Царскосельские чтения, vol. I, № XVIII, 2014, էջ 387-394:

[21] Տե՛ս **Аграшева О. Е.** Речевые манипуляции в политическом дискурсе США, Огарёв-Online, № 10 (99), 2017, էջ 3:

[22] Տե՛ս նույն տեղը:

[23] Տե՛ս **Ковешникова М. Н.,** նշվ. աշխ., էջ 387-394:

[24] Տե՛ս նույն տեղը:

[25] Տե՛ս Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/308115326500418, https://www.facebook.com/atch/live/? v=344497682960618&ref=watch_permalink, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/460712021102359, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/630626894033918 (այց՝ 12.05.2021, ժ 17:50):

[26] Տե՛ս **Лагутина О. В.** Избирательные кампании и СМИ: Учеб. пособие; Юго-Зап. гос. ун-т., Курск, 2014, էջ 120-125:

«լռեցում և ընդգծում», **բացահայտ սուտ, տեղեկատվության կրկնություն**[27], **պնդում**, **թշնամու մատնանշում**, **ծաղր**, **«փաստարկում առ մարդ» (Ad hominem)**, **հղում կարծիքի առաջատարին**, **վարկանիշների մանիպուլյացիա**[28]: Քաղաքական մանիպուլյացիաների ժամանակ ակտիվորեն կիրառվում են **առասպելները**[29]:

Մանիպուլյատիվ ներուժ ունի նաև ոչ վերբալ հաղորդակցությունը: Ըստ Ռոզենբերգի՝ քաղաքական գործիչը կարող է ոչ վերբալ նշաններով լսարանի վրա թողնել իր համար ցանկալի տպավորություն: Ոչ վերբալ հաղորդակցությունների միջոցով կարող են փոխանցվել զգացմունքներ. այն ներառում է աչքերի կոնտակտը, դեմքի արտահայտությունը, ժեստերը, հագուկապը, կեցվածքը, ձայնի արագությունն ու բարձրությունը, պրոքսեմիկան, հպումները[30]:

Քաղաքական հաղորդակցությունների սիմփլիֆիկացիա

Սիմփլիֆիկացիա եզրույթը հաճախ հանդիպում է ինչպես տեխնիկական բնույթի, այնպես էլ թարգմանչական-լեզվաբանական ոլորտին նվիրված գիտական գրականության մեջ: Քեմբրիջյան բառարանում սիմփլիֆիկացիան (լատ. simplex – պարզ և facere – անել) սահմանվում է որպես ինչ-որ բան պակաս բարդ դարձնելու, պարզեցնելու և հետևաբար՝ հասկանալու կամ անելու համար ավելի դյուրին դարձնելու գործընթաց կամ այս գործընթացի արդյունք[31]:

Քաղաքական հաղորդակցությունների պարագայում մենք գործ ունենք քաղաքական խոսքի սիմփլիֆիկացիայի հետ: Քաղաքական սիմփլիֆիկացիայի ժամանակ խնդիրը չափազանց պարզեցվում է, մտածված հետին պլան են մղվում որոշիչ և կարևոր տարրերը, առանձին խնդիրները սահմանվում են որպես պսևդոխնդիրներ, կամ առաջին պլան են մղվում հենց պսևդոխնդիրները[32]:

Մանիպուլյատիվ տեխնիկաներից շատերը մի կողմից ենթադրում են, մյուս կողմից հանգեցնում քաղաքական հաղորդակցության սիմփլիֆիկացիայի: Նման տեխնիկաներից են մասնավորապես՝

1. **Տեղեկատվության և փաստերի ընտրողաբար մատուցումը.** քաղաքական գործչի տեսանկյունից նախընտրելի փաստերի և տեղեկատվության վրա լսարանի ուշադրությունը սևեռելը, անցանկալի

---

[27] Տե՛ս **Baran S. J., Davis D. K.** Mass communication theory. Foundations, ferment and future, sixth edition, Cengage Learning, 2010, էջ 23:

[28] Տե՛ս **Ն. Մելքոնյան,** ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյացիոն հնարքներն ու սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները, «21-րդ ԴԱՐ», թիվ 5 (63), 2015, էջ 59:

[29] Տե՛ս **Кара-Мурза С. Г.,** նշվ. աշխ., էջ 205-208:

[30] Տե՛ս **Rominiecka M.** Non-verbal cues in politics: an analysis of gestural signals sent by american and european politicians, Studies in Contemporary Linguistics, № 44(2), 2008, էջ 247–263:

[31] Տե՛ս Simplification, meaning in the Cambridge English Dictionary, https://dictionary.cambridge.org/dictionary/english/simplification, 09.03.2021, ժ.19:00:

[32] Տե՛ս **Вишнякова С. М.** Профессиональное образование. Словарь. Ключевые понятия, термины, актуальная лексика, М., 1999:

փաստերը և տեղեկատվությունը քողարկելը կամ թերի մատուցելը:

2. **Առասպելների և կարծրատիպերի կիրառումը**. կարծրատիպերը և առասպելները մարդուն շրջապատող իրականությունը ավելի պարզեցված ներկայացնելու միջոցներ են:

3. **Ոճաբանական տեխնիկաները** հնարավորություն են տալիս խոսքի մեջ շեշտադրումներ կատարելու, լրացուցիչ էմոցիոնալ երանգ հաղորդելու:

4. **Հռետորական հարցերը** պատասխան չեն ակնկալում և պարունակում են կարծիք, որը տվյալ դեպքում բխում է քաղաքական գործչի շահերից:

5. **Պիտակները** նպատակադրված են ստեղծվում և դրվում շրջանառության մեջ: ԶԼՄ-ների օգնությամբ դրանք տարածվում են, գոյատևում են երկար, դառնում առօրյա օգտագործման բառեր՝ երբեմն դուրս մղելով կամ փոխարինելով նույն իմաստն արտահայտող, բայց պակաս ագրեսիվ հասկացությունները:

6. **Ծաղրը** կիրառվում է քաղաքական սուբյեկտի հանդեպ հեգնական, անլուրջ վերաբերմունք ձևավորելու նպատակով:

7. **Անմիջականությունը/ոչ ֆորմալությունը.** քաղաքական գործիչը կիրառում է կենցաղային բառապաշար և փորձում է լսարանի շրջանում տպավորություն ստեղծել, որ նա իրենցից մեկն է:

8. **Ad hominem փաստարկումը**, որը նկարագրել է դեռևս Արիստոտելը, մինչ այսօր ամենակիրառվողներից է: Այս հնարքը կիրառողները քննարկում են քաղաքական գործչի բնավորությունը, արտաքինը, անձնական կյանքը և այլ փաստարկներ, բայց բովանդակային ռացիոնալ փաստարկներ չեն բերում[33]:

9. **Թշնամու մատնանշումը.** այս տեխնիկան կիրառվում է լսարանի շրջանում «հակառակորդի» նկատմամբ բացասական զգացմունքներ առաջացնելու համար՝ միաժամանակ ստեղծելով խոսողի հետ համերաշխության զգացմունք՝ «մենք»-ի գիտակցություն:

10. **Պնդումը.** հաճախ որևէ տեսակետի հաստատման համար կիրառվում են մերկ պնդումներ, որոնք չեն հիմնավորվում վերլուծություններով ու քննարկումներով: Պնդվող տեսակետը դառնում է առաջատար՝ չունենալով ծանրակշիռ հիմնավորում:

Քաղաքական գործիչները կիրառում են սիմփլիֆիկացիաներ, քանի որ դրանք թույլ են տալիս շատ արագ ազդել լսարանի վրա և դրդել որոշակի գործողությունների կամ անգործության: Զուգահեռաբար՝ քաղաքական գործիչներն ավելի հազվադեպ են հենվում ռացիոնալ փաստարկման, տեղեկատվության ամբողջական տրամադրման կամ իրավիճակի օբյեկտիվ նկարագրության վրա: Պոպուլիստական քաղաքական դիսկուրսում սիմփլիֆիկացիների կիրառումն ավելի տարածված է:

---

[33] Տե՛ս **Уолтон Д.** Аргументы ad hominem. М.: Институт фонда «Общественное мнение», М., 2002, էջ 6-7:

Սիմվլիֆիկացիա, պոպուլիզմ և հակաէլիտիզմ

Սիմվլիֆիկացիոն տեխնիկաները, որպես կանոն, կառուցվում են հակաէլիտիզմի բովանդակային հիմքի վրա: Պոպուլիզմն իր բնույթով քաղաքական հռետորաբանության տեսակ է, որը հիմնված է էլիտաների բարոյական ստորացման և նրանց որպես շահամոլ և ոչ ժողովրդավար ներկայացնելու վրա[34]: Պոպուլիստները պնդում են, որ էլիտաները ստեղծել են ճգնաժամ, ինչը հասարակության մեջ եղած բոլոր խնդիրների պատճառն է: Անկախ նրանց գաղափարական նախապատվություններից՝ պոպուլիստները խոստանում են փոխարինել գոյություն ունեցող «կաշառակեր էլիտաներին» այնպիսի քաղաքական կարգով, որը մարդկանց ցանկություններին և նպատակներին կենտրոնական տեղ է հատկացնում:

Մյուլլերը առանձնացնում է պոպուլիզմի հետևյալ ցուցիչները՝ հակաէլիտիզմ, հակապլյուրալիզմ և սոցիալ-քաղաքական խորը շերտավորում[35]:

Սիմվլիֆիկացիաները քաղաքական գործիչների հաղորդակցություններում

Պոպուլիստական դիսկուրսը քաղաքական նպատակների իրացման առումով գնալով ավելի արդյունավետ և տարածված է դառնում: Այդ իմաստով հաճախ օրինակ են բերում ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Արևմտյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներ[36]: Դոնալդ Թրամպի քաղաքական հաղորդակցություններն ամենաքննարկվողներից են այս համատեքստում. նա անխնա օգտագործում էր Ad hominem փաստարկումները[37]: Մեկ այլ քաղաքական ֆենոմեն է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին. նրան որոշ պարբերականներ անվանում են «ուկրաինական Թրամպ»[38]: Իր երդմնակալության արարողության ժամանակ Զելենսկին պատերազմ հայտարարեց «հին էլիտաներին»[39]: 1990-ականների Իտալիայում Սիլվիո Բեռլուսկոնիի քաղաքական վերելքը և հեղինակությունը պայմանավորված էին նրա կողմից տնտեսական կոնցեպտների հմուտ պարզեցմամբ. նա դրանք դարձնում էր «հասանելի բոլորի համար»[40]: Լեհաստանի և Հունգարիա-

---

[34] Տե՛ս **Lacatus, C.** Populism and the 2016 American Election: Evidence from Official Press Releases and Twitter. PS: Political Science & Politics, № 52(2), 2019, էջ 223-228:

[35] Տե՛ս նույն տեղը:

[36] Տե՛ս նույն տեղը:

[37] Տե՛ս **Perry S.** President Trump and Charlottesville: Uncivil Mourning and White Supremacy // Journal of Contemporary Rhetoric, Vol. 8, № 1/2, 2018, էջ 68:

[38] Տե՛ս **Горчинская А.** Трамп по-украински? Зачем Владимир Зеленский решил писать свою программу "вместе с народом", https://nv.ua/ukraine/tramp-po-ukrainski-zachem-vladimir-zelenskij-reshil-pisat-svoju-prohrammu-vmeste-s-narodom-2516620.html, 12.04.2021, ժ. 15:00:

[39] Տե՛ս **Чунихина С.** Новый украинский популизм. О чем сказал и промолчал Владимир Зеленский в своей инаугурационной речи, https://focus.ua/opinion/opinions/429431-novyj-ukrainskij-populizm-o-chem-skazal-i-promolchal-vladimir-zelenskij-v-svoej-inauguracionnoj-rechi, 12.04.2021, ժ. 15:15:

[40] Տե՛ս **Салин П. Б**. Популизм в Европе как пример нового поколения политтехнологических практик, Гражданин. Выборы. Власть, 2018, № 2, էջ 86-99:

յի քաղաքական ուժերն ակտիվորեն շահարկում են փախստականների խնդիրը և դրանից բխող սոցիալական հիմնախնդիրները՝ օգտագործելով բնակչության վախերն իշխանությունը պահպանելու համար[41]:

Սիմվլիֆիկացիաները Ն. Փաշինյանի քաղաքական հաղորդակցություններում

Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» հաջողությունը ցույց տվեց, թե ինչպիսի ազդեցության և քաղաքական փոխակերպումների կարող են հանգեցնել արդյունավետ մշակված հաղորդակցային ռազմավարությունները: Հետհեղափոխական ժամանակահատվածը ենթադրում էր նոր որակի հաղորդակցություններ, որոնց առանցքային սուբյեկտը Նիկոլ Փաշինյանն էր: Նա կիրառում էր բազմապիսի մանիպուլյատիվ տեխնիկաներ, որոնք հանգեցնում էին քաղաքական հաղորդակցության սիմվլիֆիկացիայի:

«Twiplomacy» կազմակերպության «Աշխարհի առաջնորդները Ֆեյսբուքում-2019» զեկույցի տվյալներով Փաշինյանը 10-րդ տեղն էր զբաղեցնում. նրա էջը 14.5 միլիոնից ավելի օգտատերերի հետ փոխազդեցություն (interaction) ուներ զեկույցի հրապարկմանը (09.04.2019) նախորդող մեկ տարվա ընթացքում[42]: Այդ իսկ պատճառով Ն. Փաշինյանի կողմից կիրառվող սիմվլիֆիկացիաներն ուսումնասիրելու համար իրականացվել է նրա ֆեյսբուքյան էջում արված հրապարակումների (լայվերի, գրառումների, հանրահավաքների ժամանակ տեղի ունեցած ելույթների, կառավարության նիստերի, Ազգային ժողովում ելույթների) որակական և քանակական կոնտենտ վերլուծություն: Վերլուծվել են 08.05.2018 - 20.05.2019 ժամանակահատվածում կատարված 432 հրապարակումներ: Այս ժամանակահատվածն ընդգրկում է հետհեղափոխական փուլը, երբ Ն. Փաշինյանը վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար էր, 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական և հետընտրական ժամանակաշրջանները:

Կոնտենտ վերլուծության արդյունքները վկայում են, որ Ն. Փաշինյանը կիրառել է սիմվլիֆիկացիոն մանիպուլյատիվ տեխնիկաների ողջ զինանոցը և անգամ հարստացրել է դրանք նոր հնարքներով: Ամենաշատ սիմվլիֆիկացիոն տեխնիկաները Ն. Փաշինյանը կիրառել է հենց նախընտրական ժամանակահատվածում (17.10.2018 - 09.12.2018). ֆեյսբուքյան էջի հրապարակումների 48%-ում տեղ են գտել սիմվլիֆիկացիոն հնարքներ: Հետհեղափոխական (08.05.2018 - 16.10.2018) և հետընտրական (10.12.2018 - 20.05.2019) ժամանակահատվածներում նա ավելի հազվադեպ է կիրառել սիմվլիֆիկացիաներ՝ հրապարակումների համապատասխանաբար 35% և 17%-ը:

---

[41] Տե՛ս **Roth K.** The Pushback Against the Populist Challenge, https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/global-4, 12.03.2021, ժ. 19:30:

[42] Տե՛ս World Leaders on Facebook 2019, https://twiplomacy.com/blog/world-leaders-facebook-2019/, 10.05.2021, ժ. 15:00:

Ն. Փաշինյանի կողմից ֆեյսբուքյան էջի հրապարակումներում ամենահաճախ կիրառվող սիմփլիֆիկացիոն տեխնիկաներն են՝ **1) անմիջականությունը և ոչ ֆորմալությունը, 2) տեղեկատվության և փաստերի ընտրողաբար մատուցումը, 3) առասպելը:**

Անմիջականություն ու ոչ ֆորմալություն սիմփլիֆիկացիոն տեխնիկայի կիրառումն արտահայտվում էր ինչպես Ն. Փաշինյանի հագուստի ընտրության («դուխով» գրառումով գլխարկ և իր նշելով՝ *«ցեխոտ կոշիկներով»*[43]), շփման մշակույթի, այնպես էլ կիրառվող բառապաշարի մեջ: Հանրահավաքների ժամանակ Ն. Փաշինյանը շփվում էր մարդկանց հետ, օգտվում էր առաջարկած հյուրասիրությունից, բաժակ էր բարձրացնում և լուսանկարվում էր նրանց հետ: Խոսքի մեջ գրական «է» օժանդակ բայի փոխարեն նա օգտագործում էր խոսակցական «ա», կիրառում էր կենցաղային բառապաշար և ժարգոնային արտահայտություններ՝ *«ֆոցնել», «փայ մտնել», «նալոգ դնել», «տասովկա», «սամասուդ», «քուչա», «թայֆա», «կլան», «բեսպրեդել»* և այլն[44]:

Տեղեկատվության ընտրողաբար մատուցումը սովորաբար հագեցած էր թվային տվյալներով, որոնք պետք է լսարանին հուշեին, որ դրանց ետևում որոշակի հաշվարկներ կամ ուսումնասիրություններ կան, և հետևաբար դրանք վստահելի են: *Օրինակ՝ «Իմ վարչապետ ընտրվելուց հետո, սիրելի՛ ժողովուրդ, ամենակարևոր արդյունքը՝ Հայաստանի Հանրապետություն ավելի շատ գալիս են, քան ՀՀ-ից հեռանում են, ինչը կարելի է համարել արտագաղթի կանխման առաջին և շատ կարևոր փուլ: Հրապարակում եմ պաշտոնական տվյալներ. այս տարվա մայիսի 10-ից օգոստոսի 14-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ժամանել է 29986-ով ավելի շատ մարդ, քան մեկնածները. նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մեկնածների թիվը եկածներից ավելի էր շուրջ 6 հազարով: Այս տարի եկածների թիվը ավելի է 29986-ով»*[45]*:*

Հետհեղափոխական ելույթներում և նախընտրական քարոզարշավի ընթացքում Ն. Փաշինյանը հաճախ կիրառում էր տնտեսական աճի մասին **առասպելը**. «*…և հիմա ձեզնից յուրաքանչյուրն ազատ է աշխատել, ներդրումներ անել, ստեղծագործել, հայրենիքը ծաղկեցնել, իր ստեղծագործական միտքը ներդնել և ՀՀ-ում քաղաքական հեղափոխության նման իրականացնել տնտեսական հեղափոխություն»*[46]:

---

[43] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/2192771847629134, (այց՝ 10.05.2021, ժ. 16:50):

[44] Տե՛ս Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/2127194537331912, https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2099718717015179, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/1938733539583146, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/344497682960618, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/460712021102359, https://www.facebook. com/nikol.pashinyan/videos/2205819642982656 (այց՝ 11.05.2021, ժ 18:10):

[45] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/249764159196556 (դիտման ամսաթիվը՝ 13.05.2021, ժ 15:10):

[46] Նույն տեղում (այց՝ 13.05.2021, ժ 15:10):

Ն. Փաշինյանը **կարծրատիպեր էր կիրառում և նոր կարծրատիպեր ստեղծում,** երբ փորձում էր նկարագրել իր հակառակորդների հետաքրքրությունները՝ ընտրելով այնպիսի բառեր, որոնք առօրյայում աղերսներ ունեն նախկին իշխանության հետ. *«Լսե՛ք բոլոր նախկին իշխանավորներ, ով որ Ղարաբաղի հարցում խոսա հայանպաստ դիրքորոշման մասին, դուք խոսացեք ուրիշ բաներից, ասենք քյաբաբից, մեռսեդեսի զապաս պագրիշկից, ասենք ենթադրենք նաչնոյ կլուբից, բիլիարդանոցից, դուք ի՞նչ կապ ունեք ընդհանրապես ազգանպաստության ու հայանպաստության հետ»*[47]:

Հռետորական հարցերի միջոցով Ն. Փաշինյանը արտահայտում էր դիրքորոշում, կարծիք կամ վերաբերմունք՝ թողնելով այն անպատասխան՝ լսարանի մտքում պատասխանի ակնկալիքով. *«Ինչպե՞ս եղավ, որ Ղարաբաղը բանակցային գործընթացից դուրս եկավ, ո՞վ արեց դա: Դե բոլորս էլ դա գիտենք, չասենք՝ ում մասին ա խոսքը, չնայած բոլորս էլ հասկանում ենք, թե ում մասին ա»*[48]:

Հակաթեզը և կոնտրաստը Փաշինյանն օգտագործում է՝ մատնացույց անելով հակառակորդին և հասարակության դիխոտոմ բաժանումը. *«Հայաստանում կար էլիտա, որն ասում էր բրինձ բաժանեմ ձեզ, ժողովուրդ ջան, բրինձ կբաժանենք, տուկի թել կբաժանենք, կառտոշկա կբաժանենք: Որովհետև նախկին էլիտան ի՞նչ էր ասում: Ասում էր՝ ժողովուրդ ջան, ես կթալանեմ, ձեզ էլ մի բան կտամ, սուս մնացեք, վերջում էլ ոստիկանությամբ, ԱԱԾ-ով կճնշեմ, որ տներից դուրս գալու համարձակություն չունենաք: Մենք էսօր ասում ենք՝ ա. չենք թալանի, և երկրորդը ձեզ համար կստեղծենք հնարավորություն, որպեսզի դուք աշխատանքով, դուք ձեր սոցիալական պայմանները բարելավեք»*[49]:

Փաշինյանը իր ելույթներում զերծ չէր մնում նաև **ծաղրից**՝ հիմնականում թիրախավորելով իր քաղաքական հակառակորդներին. *«Ժողովուրդ, էսքան ես առողջություն ունե՞մ՝ ՀՀԿ-ներին սաղ բացատրեմ»*[50]:

Ad hominem փաստարկումը Ն. Փաշինյանը կիրառում էր՝ իր քաղաքական հակառակորդների հնչեցրած մեղադրանքներին պատասխանելիս. *«Մի մարդ, ով զինվորին չի կարեցել մայկա-տռուսիկով ապահովի, վերա կացել, խոսում ա… Այ ընգեր, դու ինչի՞ մասին ես խոսում… Դու, ընդհանրապես, ո՞վ ես, որ խոսում ես»*[51]:

Ն. Փաշինյանի քաղաքական հաղորդակցությունների ուսումնասիրությունը թույլ տվեց դուրս բերել սիմփլիֆիկացիա ենթադրող այն-

---

[47] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/341179769799594 (այց՝ 8.05.2021, ժ 13:10):

[48] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/630626894033918, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/630626894033918, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/325278641567454, https://www.facebook.com/watch/live/?v=2288092014812659&ref=watch_permalink (այց՝ 13.05.2021, ժ. 23:00):

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում:

[51] Նույն տեղում:

պիսի մանիպուլյատիվ հնարքներ, որոնք հատուկ են հենց Ն. Փաշինյանի քաղաքական դիսկուրսին, նկարագրված չեն մասնագիտական գրականության մեջ: Դրանք են՝

1. Բացառիկություն. Ն. Փաշինյանը հաճախ շեշտադրում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների, հայ ժողովրդի և իր քաղաքական թիմի բացառիկությունը. *«Այն, ինչ տեղի է ունեցել Հայաստանում, աշխարհում դրա փորձը չկա»*[52]:

2. Ժողովրդին որպես կենտրոնական սուբյեկտ ներկայացնել և սեփական դերը նվազեցնել. Ն. Փաշինյանը հաճախ շեշտադրում էր ժողովրդին որպես գլխավոր որոշում կայացնողի, որպեսզի ընդգծի լսարանի կարևորությունը՝ շոյելով լսողների էգոն. *«ՀՀ-ում իշխանությունը պատկանում է մեկ բարձրագույն սուբյեկտի, և այդ սուբյեկտը ՀՀ քաղաքացին է, հայ ժողովուրդը»*[53]:

3. Պատասխանատվության տեղափոխում. Ն. Փաշինյանը քաղաքական գործընթացների իրականացման և շարունակության պատասխանատվությունը տեղափոխում էր ժողովրդի վրա. *«Հայաստանի քաղաքացին պատասխանատու է ոչ թե կառավարության առաջ, Հայաստանի քաղաքացին պատասխանատու է ապագա սերունդների առաջ»*[54]:

4. Տրամաբանական շղթայի խախտում. այս սիմվլիֆիկացիոն տեխնիկան կիրառվում էր, երբ Ն. Փաշինյանը առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող երևույթների միջև պատճառահետևանքային կապեր էր ստեղծում. *«Ասում են՝ մարզպետը պարգևատրում ա ստացել, ինքն իրան պարգևատրում ա գրել: Ոչ մեկ չի ուրախանում, որ էտ մարզպետ ա գործում, որը 400 հազար դրամի կարիքը ռեալ ունի... Վերջին անգամ ՀՀ-ում դուք ե՞րբ եք մարզպետ տեսել, որ 400 հազար դրամի կարիք ա ունեցել... Փոխանակ ուրախանան, որ երկրում մարզպետներ են հայտնվել, որ 400 հազար դրամի կարիքն ունեն, չեն ասում, որ ամբողջ պետական համակարգը առավոտից իրիկուն գռփելիս ա եղել ու թալանելիս ա եղել»*[55]:

5. Բարդ երևույթների պարզունակ մեկնաբանում. Ն. Փաշինյանը ուղիղ եթերների, կառավարության քննարկումների կամ ելույթների ժամանակ տնտեսական, իրավական բարդ գործընթացները նկարագրում էր պարզունակ ձևով՝ առաջին պլան մղելով իր տեսանկյունից կարևոր թեզերը և լռեցնելով վիճելի, իր դիրքորոշումը խոցելի դարձնող փաստարկները:

---

[52] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2179128349074215, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/1881773045235118, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/754221634920781 (այց՝ 7.05. 2021, ժ 23:00):

[53] Նույն տեղում:

[54] Նույն տեղում:

[55] Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/340688026591419, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/249764159196556, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/300792294083053, https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/1196993160466242 (դիտման ամսաթիվը՝ 8.05.2021, ժ 13:10):

6. Դավադրության տեսություն. Ն. Փաշինյանը որոշ իրադարձություններ մեկնաբանում էր որպես որոշակի խմբերի կողմից կազմակերպված դավադրություն. *«Ներկայացվել է մի խայտառակ օրինագիծ, որի նպատակը շատ կոնկրետ Հայաստանում հակահեղափոխություն իրականացնելն է …և այդ նախագծի ընդունումը դավադրություն է Հայաստանի բարձրագույն իշխանության նկատմամբ, այսինքն՝ հայ ժողովրդի նկատմամբ»*[56]:

7. Սպառնալիք. Ն. Փաշինյանը սպառնալիքներ էր ուղղում հիմնականում քաղաքական «թշնամիներին»՝ օգտագործելով ժարգոնային արտահայտություններ և ագրեսիվ դիմախաղ. *«Տո, այդ, բոլորին կպառկացնենք ասֆալտին .... բոլորին կպառկեցնենք ասֆալտին ... գող կլնի, աֆտարիծետ կլնի, պատերով կտամ բոլորիդ, պատերով»*[57]:

8. Բեմականացում. Ն. Փաշինյանի կողմից կիրառված ամենավառ բեմականացման օրինակներից է 2018 թ. հոկտեմբերի 2-ին նախարարներին հրապարակային աշխատանքից ազատելը:

Եզրակացություն

Այսպիսով՝ քաղաքական հաղորդակցություններում անխուսափելիորեն օգտագործվել և օգտագործվում են բազմապիսի մանիպուլյացիաներ: Ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիների հետ շարունակական հաղորդակցման անհրաժեշտությունը հանգեցնում է սիմվլիֆիկացիոն տեխնիկաների կիրառման ինտենսիվացման: Քաղաքական գործիչները իշխանություն ձեռք բերելու, իրացնելու և պահպանելու նպատակով քաղաքացիների հետ հաղորդակցվելիս օգտագործում են նույն այդ քաղաքացիների առօրյա բառամթերքը՝ ավելի «մտերիմ» դառնալով ընտրողների համար: Այդ բառամթերքը շատ դյուրին հասկացվում, ընկալվում, ընդունվում և կրկնվում է շարքային քաղաքացիների կողմից, բայց քանի որ այն արդեն օգտագործվում է քաղաքական իշխանության ներկայացուցիչների, ԶԼՄ-ի կողմից, այն ստանում է նոր՝ ավելի բարձր որակ և ընդունելի է դառնում ոչ միայն առօրյա հաղորդակցություններում, այլև ներխուժում է կրթական, աշխատանքային, գիտական և իհարկե քաղաքական դիսկուրսների մեջ՝ պարզունակ դարձնելով դրանք և զրկելով ռացիոնալ փաստարկման հրամայականից: Քաղաքական դաշտում առկա զարգացումները նպաստավոր պայմաններ են ստեղծում քաղաքականության մեջ հաղորդակցային սիմվլիֆիկացիաների կիրառման համար, որոնք չեն ենթադրում ռացիոնալ համոզում և թույլ են տալիս պոպուլիստական քաղաքական գործիչներին հասնել իրենց նպատակներին՝ ձևավորելով հակաէլիտիստական դիսկուրս:

Պոպուլիստական դիսկուրսը, առավել ևս եթե դրա հեղինակը քաղաքական իշխանության գլխավոր սուբյեկտն է, պետության առաջ-

[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում:

նորդը, ազդում է քաղաքական հաղորդակցությունների ընդհանուր բովանդակության վրա, ինչպես նաև քաղաքական հաղորդակցությունների մյուս սուբյեկտների դիսկուրսների վրա: Քաղաքական մյուս սուբյեկտները՝ հատկապես ընդդիմադիր քաղաքական ուժերը, պոպուլիզմին հակազդելու փոխարեն շատ հաճախ իրենք են սկսում կիրառել սիմփլիֆիկացիոն տեխնիկաներ, քանի որ ականատես են պոպուլիստ քաղաքական ուժերի և նրանց կողմից կիրառվող տեխնիկաների հաջողությանը, և առանց սիմփլիֆիկացիաների լսարանը կարող է նրանց ընդհանրապես չընկալել: Ստեղծվում է քաղաքական հաղորդակցությունների «փակ շղթա», որտեղ առկա են միայն պոպուլիստական դիսկուրսներ, և սիմփլիֆիկացիոն մանիպուլյացիաներին հաջորդում են նոր սիմփլիֆիկացիաներ:

ЮЛИАНА МЕЛКУМЯН, ШОГЕР АКОПЯН – ***Симплификация в политических коммуникациях.*** – Политические коммуникации неизбежно преследуют цели получения, реализации и сохранения власти. Борьба за власть и реализация политических целей предполагает использование манипулятивных техник. В данной статье речь идет, в частности, об использовании симплификационных манипуляций в политических коммуникациях. Язык политических коммуникаций не только отражает политический режим, но и обуславливает политический дискурс. В демократических странах дискурс политических деятелей очень близок к дискурсу избирателей, а недемократические элиты пытаются подчеркнуть дистанцию с рядовыми гражданами. Демократические лидеры зачастую прибегают к симплификациям политических текстов, что не только ускоряет воздействие на аудиторию избирателей, упрощает коммуникации между народом и властью, но и сокращает социальную дистанцию между ними. В процессе политических симплификаций серьезные задачи и веские аргументы преднамеренно отодвигаются на второй план, важные проблемы провозглашаются псевдопроблемами или на первый план выдвигаются именно псевдозадачи. Использование симплификаций сокращает объем и необходимость рациональной аргументации в политическом дискурсе. Симплификации зачастую используются популистами, которые рациональную аргументацию подменяют антиэлитистскими и антиплюралисткими лозунгами, подчеркивающими социальную поляризацию в обществе, и обещают свергнуть коррумпированную элиту.

Контент-анализ страницы Н. Пашиняна в социальной сети Facebook свидетельствует, что Н. Пашинян не только щедро использует различные симплификации в своих политических коммуникациях (в частности: непосредственность и неформальность, избирательная подача информации и фактов, мифы), но и создает собственные авторские симплификационные приемы. В том числе: прием исключительности, представление народа в качестве центрального субъекта политической власти, принижение собственной роли, перенос ответственности, нарушение логической цепочки, упрощенная интерпретация сложных явлений, теории заговора, угрозы и театрализация.

Симплификации доказали свою эффективность в политической борьбе. Однако злоупотребление симплификациями в политических коммуникациях чревато проникновением симплификаций из обыденного лексикона в образовательный, научный, трудовой и, конечно, в политический дискурсы, лишая их рациональной аргументации.

Ключевые слова: *симплификция, манипулятивная техника, политические коммуникации, политический дискурс, политический текст, антиэлитизм, популизм, демократия*

YULIANA MELKUMYAN, SHOGHER HAKOBYAN – ***Simplification in Political Communications.*** – The goal of political communications is to obtain, exercise, and stay in power. The struggle for power and the implementation of political goals necessarily involves the use of manipulative techniques. This article deals, in particular, with the use of simplifications in political communications. The language of political communication not only reflects the political regime but also determines the political discourse. In democratic countries, the discourse of politicians is very close to that of voters, while non-democratic elites try to emphasize their distance from ordinary citizens. Democratic leaders often simplify the political texts, which not only accelerates and intensifies the impact on the audience, simplifies communication between the people and the authorities but also reduces the social distance between them. Political simplifications push essential problems and arguments backstage, some problems are proclaimed as pseudo-problems, or it is pseudo-problems that are brought to the forefront. The use of simplifications reduces the scope and need for rational argumentation in political discourse. Simplifications are often used by populists, who replace rational argumentation with anti-elite and anti-pluralist slogans that emphasize social polarization in society and promise to get rid of the corrupt elites.

Content analysis of N. Pashinyan's Facebook page shows that N. Pashinyan not only generously uses various simplifications in his political communications but also creates his own simplification techniques, including the exceptionalism, representation of the people as the central subject of political power, the belittlement of one's own role, responsibility shifting, logical inconsistencies, simplified interpretations of complex phenomena, conspiracy theories, threats, and theatricalization.

Simplifications have proven to be effective in political struggles. However, the overuse of simplifications in political communications can cause simplifications to migrate from the ordinary language into educational, scientific, labor, and, of course, political discourses, depriving them of rational argumentation.

Key word: *simplification, manipulative technics, political communications, political discourse, political text, anti-elitism, populism, democracy*